

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան

Վ. Գաբրիելյան

22 հունիսի 2011 թ.
N 31

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

**ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ)
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ (ՏՈԿՈՍՆԵՐԻ)
ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ՀՀ կառավարության 27.12.2007թ. «Հայաստանի Հանրապետության պետական (զանձապետական) պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (զանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի N 1103-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1580-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված՝ ՀՀ պետական (զանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգի՝

ա) 54-րդ կետի համաձայն, այդ պարտատոմսերով հավաստված իրավունքներն ամրագրվում են, ինչպես նաև այդ իրավունքները փոխանցվում, վերապահվում և սահմանափակվում են երկմակարդակ պահառուական համակարգով՝ պահառուի և ենթապահառուների մոտ վարվող դեպո հաշիվների վրա պարտատոմսերի վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու միջոցով:

բ) 55-րդ կետի համաձայն, պահառուի գործառույթները կատարում է ՀՀ կենտրոնական բանկը, իսկ ենթապահառուների գործառույթները՝ գործակալները (դիլերները), ինչպես նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել պահառուական գործունեությամբ:

գ) 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, գործակալ է՝ առևտրային բանկը, վարկային և այլ ֆինանսական կազմակերպությունը, որը թողարկողի ու ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքել է պետական (զանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր: Պարտատոմսերով գործարքների իրականացման ժամանակ գործակալը գործում է իր անունից՝ իր հաշվին կամ իր անունից՝ ներդրողի հաշվին՝ նրա հանձնարարությամբ:

դ) 42-րդ կետի համաձայն, գործակալը ենթապահառու է և վարում է իր ներդրողների դեպո հաշիվները:

Հետևաբար, ստացվում է, որ պարտատոմսերի պահառությունն իրականացվում է պահառուական եռմասնաբաժնի համակարգով, որտեղ բանկերը անուսումնասիրելով պարտա-

զիդենտ կազմակերպություններին) կամ ձեռք են բերում նրանց հաշվին՝ նրանց հանձնարարությամբ: Այսինքն՝ բանկերը կատարում են ենթապահառուի գործառույթներ և հանդիսանում են *գործակալ*: Միաժամանակ, պահառուի մոտ վարվող՝ դեպո հաշիվներին առկա պարտատոմսերի ծավալին համապատասխան, ՀՀ կենտրոնական բանկը մարում և արժեկտրոնների գումարները փոխանցում է համապատասխան ենթապահառուի հաշվին, որն էլ իրականացնում է մարվող պարտատոմսերի և արժեկտրոնների գումարների վճարումը իր ներդրողներին՝ տվյալ դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպություններին:

2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան, ՀՀ առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել *հարկային գործակալի* վրա: Հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող) իրավաբանական անձն է (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), անհատ ձեռնարկատերը, նոտարը, հիմնարկը, տեղական ինքնակառավարման մարմինը, որի վրա օրենքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը (այդ թվում՝ անուղղակի) հաշվարկելու, պահելու (զանձելու) և Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեներ վճարելու պարտավորությունը:

3. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝

ա) 53-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 3-րդ մասի «բ» ենթակետերին համապատասխան, տոկոսները՝ որպես պասիվ եկամուտներ, համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ,

բ) 57-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է *հարկային գործակալը*՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ բանկերի կողմից պետական պարտատոմսերը ոչ ռեզիդենտ կազմակերպությանը վաճառելու կամ նրա հաշվին՝ նրա հանձնարարությամբ ձեռք բերելու դեպքում պարտատոմսերից ստացվող տոկոսները վճարում է դիլերը (բանկը), հարկային օրենսդրության վերը նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, *պաշտոնապես պարզաբանում են*:

Բանկերի կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի դիմաց վճարված եկամուտների (տոկոսների) հարկումը կատարվում է բանկերի կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: